ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Հ. ԱՐԱՄՅԱՆ

ՆՈՐ-ԶԵՅԹՈՒՆՈՒՄ

Նոր-Արաբկիրից հետո, սիրելի՛ ընթերցող, եկ միասին այցելենք Նոր-Զեյթուն ավանը, որ հայրենադարձ հայերի կողմից կառուցված ավանների ամենագեղեցիկներից մեկն է անտարակույս։

Հյուսիս-արևմուտքից հյուսիս-արևելք մեր քաղաքամայր Երևանը պայտաձև շրջապատող կանաչածածկ բլուրների կենտրոնումն է նա, ու գրավում է մի հսկայական հողամաս՝ Գետառի ձորն ի վեր սեպ բարձրացող բլուրների գագաթից մինչև Քանաքեռի մատույցները։ Բարձրադիր բլուրների գոգում, պուրակներով եզերված, առատահոս ջրերով ոռոգված, բերրի տնամերձ այգիներով զարդարված՝ Նոր-Զեյթունը իր տեղադրությամբ նման է հին Զեյթունին, հենց դրա համար էլ ընտրված է այդ վայրը նոր ավանի կառուցման համար։

Նոր ավանը կարելի է բարձրանալ Գետառի ձորից սկսվող լեռնային ուղիներով և կածաններով՝ նման այն նեղ ու քարքարուտ ուղիներին, որ տանում էին հին Զեյթուն։ Բայց կա և մի ճանապարհ, մի փոխադրական միջոց, որից զուրկ էր հին Զեյթունը. դա՝ Աբովյան պողոտայի վերին ծայրամասից, Աբովյանի անվան պուրակի մոտիկից սկսվող և շքեղ սոսիների, բարդիների հաճելի կանաչով և ստվերով եզերված Երևան—Քանաքեռ լայնարձակ, ասֆալտապատ խճուղին է, որ պլորապտույտ շրջանցում է Հաղթանակի մոնումենտով հպարտ բլուրը։ Անհամար ավտոմեքենաներ, ավտոբուսներ երթևեկում են այդ գեղեցիկ խճուղու վրա։ Ավտոբուսներից մի տասնյակը սպասարկում է նոր ավանի բնակիչներին։

Ահա բարձունքի վրա ենք, Հաղթանակի մոնումենտը շրջապատող ընդարձակ ու գեղատեսիլ պարկի արտաքին դարբասների առաջ։ Ներքևում՝ Երևանի համայնապատկերն է, Արարատյան դալարագեղ դաշտը, Մասիսը՝ հորիզոնի վրա։ Խճուղու աջ կողմն ահա վերջանում է Մոնումենտը շրջապատող պուրակը և անմիջապես սկսվում են Նոր-Զեյթունի անհամար տների շարքերը։ Առաջնորդի մոնումենտի հետ այդ անմիջական հարևանությունը նոր ավանի բնակչության ամենամեծ հպարտանքն ու պարծանքն է հանդիսանում։

Խճուղուց թեքվենք աջ ու մտնենք մեկն ու մեկը լայն փողոցներից, որոնց երկու կողմերը ուղիղ շարքերով բարձրանում են քարակերտ նոր տներ՝ գրեթե բոլորը երկհարկանի կամ եռահարկ. շատ քիչ են միահարկանի տները. այս վերջիններն էլ կառուցված են ամրախարիսխ, այն հաշվով, որ շուտով նրանց վրա բարձրանան երկրորդ հարկը, երրորդ հարկը։ Յուրաքանչյուր տուն ունի իր հողամասը, որտեղ տնկված են ծառեր, ծաղիկներ, բանջարեղեն։ Ծառերը դեռևս մատղաշ են, բայց մեկ-երկու տարի հետո արդեն կսկսեն պտուղ տալ։

Կառուցումների համար գործ են ածված համարյա բոլոր տեսակի շինության քարերը, որոնցով այնքան հարուստ է մեր երկիրը. այդ քարերից մեծ մասը ունեն ակնահաճո գույներ՝ վարդագույն, կարմրավուն, դեղնավուն, սև, սպիտակ, մոխրագույն։ Գույների ներդաշնակ շարվածքը արտաքին որմերում, ինչպես նաև ճարտարապետական այլազան ձևավորումները, նոր ավանը դարձրել են նկարագեղ, ակնապարար։ Երբ նորատունկ ծառերն ավելի աճած լինեն ու կանաչը ավելացած լինի բոլոր տների մերձավորության

մեջ, ավանը կդառնա ավելի ևս գունեղ, գեղատեսիլ։

Նոր-Զեյթունը բաղկացած է երեք խոշոր թաղամասերից — Վերին Զեյթուն, Ներքին Զեյթուն և այս երկուսով շրջապատված՝ Կամարակը։ Սկզբնականորեն նրանք անջատ, ուրույն, միմյանցից բավականին հեռու ընկած, ընդարձակ անբնակ տարածություններով միմյանցից բաժանված ավաններ էին, իսկ այժմ՝ այդ անբնակ տարածություններում հետզհետե բարձրանում են շենքեր, կազմավորվում են նոր փողոցներ։

Վերին և Ներքին Զեյթուններից համարյա հավասար հեռավորության վրա, Կամարակի առջև, լայն ճանապարհի եզերքին կանգնած է Նոր-Զեյթունի շքեղ ակումբը՝ վարդագույն տուֆից երկհարկանի մի ընդարձակ շենք, որտեղ են՝ հանդիսությունների դահլիճը, թատրոնը, կինո-թատրոնը, գրադարանն ու ընթերցարանը, որոնք հանդիսանում են բնակչության կուլտուրական կյանքի մշտաբաց և մշտավառ օջախները։ Ավանը ունի մեկ լրիվ միջնակարգ դպրոց, երկու թերի միջնակարգ, որոնցից մինը շուտով կդառնա լրիվ միջնակարգ՝ երբ ավարտվի դպրոցական նոր շենքի կառուցումը։ Ավանը ունի նաև մանկապարտեզներ, մանկամսուրներ, պոլիկլինիկա և զանազան բուժկետեր։

Ոչ պակաս քան հազար շենք ունեցող և մի քանի հազար շունչ պատսպարող այս սիրունատես ավանը բացարձակապես գոյություն չուներ դեռևս 1947 թվի վերջին ամիսներին։ Ընդամենը չորս տարվա կարճ ժամանակի մեջ՝ հրաշքի պես բարձրացել է այստեղ միջակ մի քաղաքի չափ ընդարձակ այս ավանը, այդ կարճ ժամկետում ծաղկել է այստեղ այս վառվռուն կյանքը։

Այս հրաշքը կատարվել է նախ և առաջ շնորհիվ մեր հարազատ հայրենի պետությանը, որը հայրենադարձ զեյթունցիներին և ոչ զեյթունցիներին տրամադրել է այս ամբողջ ընդարձակ և բարեհարմար տարածությունը, տրամադրել է երկարատև վարկեր, իր ճարտարապետները, տրամադրել է շինանյութ և փոխադրական միջոցներ։ Իր միջոցներով կառուցել է այս ակումբը, դպրոցները, բուժկայանները և հասարակական այլ ձեռնարկություններ։

Բայց այս բոլորը արդյունք է նաև շինարար, հայրենի երկրում օր առաջ սեփական տուն ու տնտեսություն ունենալու, արմատավորվելու վառ տենչերով ակաղձուն հայրենադարձների, հատկապես հին զեյթունցի մի խումբ խանդավառ մարդկանց կամքին։

Լավ է քեզ հետ փնտրենք ու գտնենք այդ մարդկանց, սիրելի՛ ընթերցող, ծանոթանանք Նոր-Զեյթունի հիմնադրության պարագաների հետ, տեսնենք, թե ի՛նչպես են ապրում հարազատ հողի վրա վերադարձած Զեյթունի բնակիչները, ի՛նչպես են իրենց բաժինը բերում, իրենց լուման ներդնում հարազատ ժողովրդի աշխատանքային սխրագործությունների մեջ։

***

Լուսապայծառ մի կիրակի առավոտ է։ Փողոցները լիքն են ցնծաձայն ու ծիծաղկոտ երեխաներով։ Տնային տնտեսուհիներ վերադառնում են շուկայից կամ մթերային խանութներից՝ սննդեղեններով լիքը ցանցակողովներով։ Երիտասարդ աղջիկներ, տղաներ՝ զուգված-զարդարված, կիրակնօրյա շքեղ շորերով, տոնական դեմքերով շտապում են դեպի ավտոբուսի կայարանը՝ Երևան իջնելու, կամ շտապում են ակումբ՝ ուրախ զրույցներով և կատակներով։ Նոր սերունդը խոսում է մաքուր արևելահայերեն։

Անցնում եմ դեղնավուն-վարդագույն երկհարկանի մի սիրուն շենքի առաջով. տան պարտեզում, մի մատղաշ դեղձենու առաջ կռացած է մի մարդ, որը թվում է ծանոթ։ Թողած աշխատանքը, նա նայում է ինձ, ոտի է կանգնում, վերցնում մոտի ձեռնափայտը, և, թեթևակի կաղալով, մոտենում է ինձ։

— Վերջապես եկա՞ք. այս երկու տարի է՝ խոստացել եք գալ իմ նոր բնակարանը շնորհավորել. շատ ուրախ եմ, համեցե՛ք։

Ֆրանսիայից ներգաղթած Հարությունն Մարտիկյանն է՝ Ֆրանսիայի հայության մեջ շատ հայտնի և սիրված հասարակական գործիչ։ Աղջիկն ու փեսան՝ ֆրանսահայ հայրենադարձների առաջին քարավանի ղեկավար Ազատ Ադամյանը, Երևանում ինձ հետ նույն շենքում և նույն հարկի վրա են ապրում։ Ընկեր Հարությունին հաճախ պատահել ենք մեր շենքում՝ իր փեսայի կամ իմ հարկաբաժիններում, կապվել ենք այդ մեծ և ազնիվ հայրենասերի հետ ջերմ զգացումներով։ Հպարտ է նա Նոր-Զեյթունում իր կառուցած բնակարանով և միշտ հրավիրել է, որ մի օր այցելեմ, տեսնեմ։ Երևի, կարծում է, թե եկել եմ իմ վաղուցվա խոստումը կատարելու։

— Ազատն էլ մեզ մոտ է, Նվարդն էլ, համեցե՛ք,— շարունակում է ընկեր Հարությունը, որը հիսունը քիչ անց, միջահասակ, ամրակազմ մի մարդ է, կանոնավոր և համակրելի դիմագծերով, բարի և ջերմ հայացքով։ Նա թյուրիմացության մեջ է, ես եկել եմ Նոր-Զեյթուն՝ նրա հիմնադիրների հետ ծանոթանալու, բայց ժամանակ չի տալիս բացատրվելու։

— Ազա՞տ,— ձայնում է նա,—արի՛ տես, թե ո՞վ է եկել մեզ այցի։

Շենքից դուրս են գալիս ընկեր Հարությունի աղջիկը՝ Նվարդը, փեսան՝ Ազատը։

— Ունենք թարմ իշխան ձուկ. Ազատն էլ Արաշատի գինի է բերել. մի կարգին քեֆ կանենք,— ոգևորվում է՝ միշտ ջահելական խանդավառությունը պահող Մարտիկյանը։

Բացատրում եմ, թե եկել եմ Նոր-Զեյթունի մասին մի ակնարկ գրելու նպատակով, թե ինձ համար հարկավոր է գտնել բնիկ հին զեյթունցի մի քանի մարդկանց, որ հանդիսացել են ավանի հիմնադիրները, թե ուրիշ մի օր կգամ հատկապես ընկեր Հարությունին այցելելու։ Իզուր։ Նա պնդում է, որ մի-երկու ժամով անպայման իր բնակարանում լինեմ...

— Սրա համառությունը Բուխենվալդը չի կարողացել կոտրել, դո՞ւ պիտի կոտրես,— կատակում է փեսան.— ավելի լավ է ընդունել նրա հյուրասիրությունը, ազատում չունես։

Չի կարելի ցավացնել գերմանական ֆաշիստների կողմից գնդակահարման դատապարտված, Բուխենվալդի տխրահռչակ ճամբարի սարսափները ճաշակած և անընկճելի մնացած այս հայրենասեր, հերոսական մարդուն։

Մարտիկյանը հպարտությամբ և երեխայական ուրախությամբ ցույց է տալիս 850 քառակուսի մետր տարածությամբ իր տնամերձում իր իսկ ձեռքով տնկված տասնյակներով ծառերը՝ ծիրանիներ, դեղձենիներ, խնձորենիներ, կեռասենիներ և բալենիներ։

— Ա՛յ, այն ծառը այս տարի արդեն պտուղ էր տվել, գալիք տարի՝ ավելի շատ կլինի, իսկ երկու տարի հետո ես կունենամ իմ սեփական ձեռներով աճեցրած կարգին մրգաստան։

Մտնում ենք շենքից ներս։ Երկու հարկի

Նոր-Զեյթունի ակումբի և կինո-թատրոնի շենքը

վրա՝ վեց սենյակ, խոհանոց և հարմարություններ։ Մարտիկյանը բաց է անում յուրաքանչյուր սենյակի դուռ, հրավիրում է տեսնել, ակներև ինքնաբավականությամբ, որը սրտառուչ է և համակրելի, այս անկեղծ և խանդավառ մարդու կողմից։

— Խոսք հո՛ չի՝, համարյա բոլորը ես իմ ձեռներով եմ կառուցել, այդպես էի ուզում, դեռ Բուխենվալդի դժոխքում — Հայրենիքում իմ սեփական ձեռներով կառուցել իմ բնակարանը։

Մարտիկյանը մարդկային ուշագրավ, հիանալի տիպ է։ Իր անսահման լավատեսությունը, կյանքի հանդեպ իր անտեղիտալի սերը հրաշք են գործել իր կյանքում, որն ուսանելի է ամենքի համար։

1915 թվականն է. սուլթանական Թյուրքիան և քայզերական Գերմանիան ստորագրել են ողջ արևմտահայության մահավճիռը...։ Համատարած տեղահանություններ են, անողոք ջարդեր, ծերուկից մինչև սաղմնային վիճակում գտնվող երեխան...։

Հերթը Հարությունն Մարտիկյանի ծննդավայր Խարբերդ նահանգի հայությանն է. բռնագաղթի են ենթարկում, կոտորում այդ նահանգի էլ բովանդակ հայությունը. կենսասեր Հարությունը, 16-ամյա մի պատանի այն սև օրերին, չի ուզում մեռնել։ «Կյանքը հիանալի բան է»,— զգում էր նա խորապես, դեռ այդ վաղ պատանության տարիներին։ Փախուստ է տալիս, անցնում է Մովք լճի նույնանուն կղզին, թաքնվում է անտառներում ու այգիներում, կարողանում է ազատվել մահից, տաճկական յաթաղանից, որին զոհ են գնում իր 16 անձից բաղկացած ընտանիքի 14 անդամները — հայրը, մայրը, չորս եղբայրները, անդրանիկ եղբոր կինը և յոթ պատանի և մանկահասակ զավակները...։ Հարությունին բախտակից է լինում, այսինքն՝ ազատվում է եղբայրներից մեկը միայն։ Կյանքը հաղթում է մահվան...

Կյանքը հաղթում է մահվան նաև Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին։ Հարությունը անցել է Սիրիա, այնտեղից՝ Ֆրանսիա, և հաստատվել Մարսելի շրջանում։ Նա շուտով աչքի է ընկել որպես անձնուրաց և ժողովրդանվեր հասարակական գործիչ — առաջադիմական-հայրենասեր ճակատի ղեկավարներից մեկը։ Ֆրանսիայի գերմանական ֆաշիստների լծի տակ գտնված տարիներին, Մարտիկյանը շարունակում է պայքարը զավթիչների դեմ, խոր ընդահատակում։ Գեստապոն կարողանում է ճանկել նրան 1943 թվին. Մարտիկյանը փակվում է Բուխենվալդի կենտրոնացման կայանը, որի անունն իսկ սարսափ է ազդում. մարդիկ այնտեղ հյուծումից, տանջանքներից, մոտալուտ մահվան սարսափից ճանճերի նման մեռնում են՝ դեռ առանց նշանավոր կիզարանները նետվելու... Տոկուն է կենսասեր Մարտիկյանի մարմինը, ավելի ևս տոկուն՝ նրա հոգին։ Նա համառում է ապրել։ Տաժանակիր աշխատանքի տարված ժամանակ, մի օր, գիշերով, Հարությունը իրեն վայր է գցում գնացքից. ոտը ջարդվում է, բայց մնում է կենդանի։ Այո՛, կյանքը հաղթում է մահվան մի անգամ ևս...։

Խաղաղություն է վերջապես։ Շատ չանցած՝ սկսվում է հայերի հայրենադարձության պատմական մեծ շարժումը։ Մարտիկյանի աղջիկը, փեսան ու թոռնիկը գալիս են Հայրենիք՝ ֆրանսահայերի առաջին քարավանով, 1947 թվին։ Մի քանի ամիս հետո, 1948 թվի հունվարին հետևում է նրանց Մարտիկյանը, իր կնոջ և տղայի հետ։ Առողջ և եռանդալից մարդ է, և իսկույն անցնում է աշխատանքի։ Բայց Բուխենվալդի դժոխքը, գնացքից վայր անկումը՝ ազդել էին Մարտիկյանի երկաթյա առողջության վրա. նա կաթվածահար է լինում անսպասելիորեն — ոտները, մարմնի ստորին մասը վնասվել են ասես անդարմանելիորեն, դարձել են անզգա, ինչպես քար։ Հուսահատությունը պատում է Մարտիկյանի ընտանիքին, ընկերներին. վախենում են, որ կաթվածը կտարածվի և կընդգրկի նաև այս սիրելի անձնավորության կենսական օրգանները, կամ, լավագույն դեպքում, նա կմնա անդամալույծ, անշարժության դատապարտված մինչև մահ...։

Նրանք հաշվի չէին առնում սովետական բժշկականության զորությունը։ Հաշվի չէին առնում մանավանդ Մարտիկյանի կենսասիրությունը, ապրելու պողպատյա կամքը, որը, արդեն, երկու անգամ հաղթանակ էր տարել մահվան դեմ։

Մարտիկյանը ոչ միայն ապրեց այս հարվածից հետո էլ, այլև կարողացավ ոտքի ելնել, կարողացավ իրագործել իր վաղեմի իղձը՝ իր սեփական ձեռներով բնակարան կառուցել Հայրենիքում, իր սեփական ձեռներով այգի տնկել։

— Կեցցե՜ կյանքը, հիանալի բան է կյանքը ամեն տեղ, բայց մանավանդ հարազատ Հայրենիքում,— կրկնում է Մարտիկյանն իր սիրած խոսքը, լցնելով գինու բաժակները։— Խմե՜նք կյանքի կենացը, Հայրենիքի կենացը։

Աշխատունակությունը կորցրած Մարտիկյանն այժմ պետությունից ստանում է թոշակ։ Աշխատում են աղջիկը՝ Նվարդը, տղան՝ Գրիգորը, փեսան՝ Ազատը, լավ աշխատավարձով։ Ինքը և յուրայիններն ապրում են բարօր կյանքով։ Հարությունն ու կինը զբաղվում են տանը, տնամերձը խնամելով, իրենց թոռնիկին՝ Նշանիկին պահելով ու դաստիարակելով։ Այս վերջինը՝ հինգ տարեկան ժիր ու կայտառ մի տղա, գնում է մանկապարտեզ։

— Իմ թոռնիկն անգիր գիտի շատ ու շատ բանաստեղծություններ,— ասում է Մարտիկյանը շոյելով երեխայի վարսափնջերը։ —Դե՛հ, մի բան արտասանի՛ր, Նշանի՛կ,— դիմում է պապիկը երեխային,— արտասանի՛ր Ն. Զարյանի «Խաղաղության Աղավնին»։

Երեխան, իր տարիքի հատուկ քաղցրությամբ և մեծահասակի ինքնավստահությամբ արտասանում է.

«Ես տիկնիկիս և ինձ համար խաղաղություն եմ ուզում...»։

Պատերազմի հրձիգների դեմ, խաղաղություն են ուզում բոլոր ժողովուրդների առաջավոր մարդիկ, կանայք ու երեխաները։

Բայց ամենից ազդուն, անտարակույս, մատաղատի երեխաների անմեղունակ բերաններով, թոթովանքով պահանջվածն է։

***

Կանգնել եմ երկհարկանի մի տան առաջ, դեղնավուն-կարմրավուն տուֆից կառուցված, պալատի պես սիրունատես, ամրոցի պես հաստատակուռ և պատկառելի։ Կողքին կա մի ուրիշ երկհարկանի սիրուն շենք։

Երկու շենքերն էլ ավանի հյուսիս-արևելյան սահմանածայրի վրա են, Հաղթանակի մոնումենտի պուրակին համարյա կից։ Այս երկու շենքերն հեռվից մատնանշել է ինձ Մարտիկյանը՝ որպես բնիկ հին զեյթունցի հայրենադարձների տներ։

Հնչեցնում եմ առաջին շենքի արտաքին դարբասի զանգը։ Դուռը բաց է անում մի բարձրահասակ, գեղեցիկ երիտասարդ։ Իր գրական նախափորձերով դեռ արտասահմանից ինձ ծանոթ Ստեփան Ալաճաճյանն է։ Այս տարի Ստեփանը ավարտել է Պետական համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետը։ Հայրենիքում նա հասունացել է որպես գրող, և շուտով լույս կտեսնի նրա գեղեցիկ մեկ վեպը՝ «Անապատում» խորագրով։

— Համեցե՛ք, համեցե՛ք,— ասում է Ստեփանը, ուրախ ժպտով, ձեռը մեկնելով։

Ես վարանում եմ. կարծում եմ, թե թյուրիմացություն կա։

— Ներողություն, Ստեփա՛ն, որ քեզ անհանգստացրի իզուր, ես բնիկ զեյթունցիների տներ եմ փնտրում, ինձ ասել էին, թե սա հենց հին զեյթունցու տուն է. երևի թյուրիմացություն կա...

— Եթե ինձ մոտ եք եկել՝ համեցե՛ք, եթե հին զեյթունցու տուն եք եկել՝ դարձյալ համեցե՛ք, որովհետև այս և՛ իմ տունն է և՛ հին զեյթունցու տուն. ես հին զեյթունցու տղա եմ, չգիտեի՞ք,— ժպտում է Ստեփանը։

— Ձեր հայրենակից՝ իմ հարևան Տյուվլատ Կարանֆիլյանը Նոր-Զեյթունի հիմնադիրների անուններն հիշելիս անցյալ օր, հիշատակում էր, ի միջի այլոց, Եղիա Ալաճաճյանին. չլինի՞, որ դուք հենց այդ Եղիայի որդին եք։

— Հենց այդպես էլ է. այս ժամիս մեզ մոտ են նաև հիմնադիրներից երկու ուրիշները՝ Նորաշխարհյանը և Կարո Կիրակոսյանը. կան նաև ուրիշ շատ զեյթունցիներ. զեյթունցիների օջախն եք ընկել,— ծիծաղում է երիտասարդ արձակագիրը։

Իրոք։ Դեռ նրբանցքից լսում ենք Զեյթունի գավառաբարբառով խոսակցությունների աղմուկ, բարձրաձայն ծիծաղներ։

Մտնում ենք մի ընդարձակ դահլիճ, ասես զեյթունցիների ակումբ լինի։ Մի խումբ հավաքվել են նարդու սեղանի շուրջ և աղմկոտ ուրախությամբ դիտում են խաղացողների «սխրագործությունները»։ Մի ուրիշ խումբ շախմատի սեղանի շուրջն է հավաքվել։ Մի մարդ թերթ է կարդում իր շուրջ հավաքված մարդկանց ու կանանց։ Ուրախ եռուզեռ, և Զեյթունի բարբառով խոսակցություններ ու կատակներ։ Երեսունից ոչ պակաս տղամարդ, պատանի, կին ու երեխա հավաքվել են այդտեղ. դրանցից տասնմեկը Ալաճաճյաններ են. մնացածներն՝ այցելուներ։

— Զեյթունցիների իսկական ակումբ իրոք, — ժպտում եմ ես ուրախացած՝ որ մեկ անգամից գտել եմ իմ ուզած համարյա բոլոր մարդկանց։

— Համարյա ամեն կիրակի այսպես է. զեյթունցիները սիրում են հավաքվել կա՛մ այստեղ՝ կա՛մ էլ հարևան տունը — Նորաշխարհյանի մոտ,— ասում է Ստեփանը։

Ծանոթանում ենք այդտեղ Նոր-Զեյթունի հինգ հիմնադիրներից երեքի՝ Փանոս Նորաշխարհյանի, Եղիա Ալաճաճյանի և Կարո Կիրակոսյանի հետ։ Ծանոթանում ենք և ակնավոր հին զեյթունցի, Ամերիկայից ներգաղթած ակնաբույժ բժիշկ Արշակ Ահարոնյանի հետ, որ Առողջապահության մինիստրության կից հաստատել է մի լավ սարքավորված աշխատանոց և հիանալի որակով ու ձևով ակնոցներ է պատրաստում։

Այս չորսը թողնում են «ակումբը», և գալիս ընդարձակ և ճաշակով կահավորված հյուրասենյակում միանում են Ստեփանին և ինձ։

— Ի՞նչպես եք գտնում մեր Նոր-Զեյթունը,— հարց է տալիս Փանոս Նորաշխարհյանը հրճվալից դեմքով և, առանց սպասելու մեր պատասխանին, ինքն իսկ շարունակում է.— Հիանալի է, չէ՞։

Այո՛, շատ գեղեցիկ է, հիանալի, բայց ինձ հետաքրքրում է մի բան. այնտեղ ապրող մի քանի հարյուր հայրենադարձ ընտանիքներից քանի՞սն են բնիկ հին զեյթունցի։ Ամբողջ մի հազարամյակ ավատական սուլթանական Տաճկաստանում աննվաճելի մնացած, հայության մարտական առաքինություններն անեղծ պահած քաջարի Զեյթունը, այն, որին հայ ժողովրդի պատմությունը տվել է «Արծիվների բույն» պատվանունը, իր անունով վերապրում և հավերժանում է Մայր Հայրենիքում. դա շատ ուրախառիթ բան է, բայց հետաքրքիր է իմանալ, թե այն նոր արծվեբույնում քանի՞ տնտեսություն է ապրում հին արծվեբույնից։

— Հին զեյթունցի 72 ընտանիք տներ են կառուցել և ապրում են այստեղ, բայց նույնքան և դուցե ավելի թվով զեյթունցի ընտանիքներ տներ ունեն և ապրում են Երևանի ուրիշ թաղերում և ավաններում։ Բայց ընդհանուր ձգտումն այն է նրանց մոտ, որ

իրենց տներն ուրիշներին փոխանցեն և իրենք գան բնակարան կառուցել այստեղ, այս շքեղ և փայլուն հեռանկարներ ունեցող ավանում,— ասում է Նորաշխարհյանը։

— Ճիշտ է,— վրա է տալիս Եղիա Ալաճաճյանը ծիծաղելով,— ա՛յ, օրինակ մեր բժիշկ Ահարոնյանը։ Նա երկհարկանի սիրուն տուն է կառուցել Այգեստանում, բայց զղջացել է. շատ պիտի ցանկանար, որ հնարավոր լիներ իր շենքը տեղափոխել և բերել հաստատել այստեղ, Եղիայի և Փանոսի շենքերի հարևանությանը։ Այնպես չէ՞, բժի՛շկ,— դիմում է նա Ահարոնյանին։

— Միանգամայն. ի՞նչ փույթ, թե շենքս այնտեղ է՝ Այգեստանում, սիրուս այստեղ է, Նոր-Զեյթունում, այստեղ է և, ինչպես ասում են, մի ոտս. համարյա ամեն կիրակիս չե՞մ գալիս անցկացնել ձեզ հետ, Նոր-Զեյթունում։

Ուզում ենք իմանալ, թե ճշգրիտ կերպով ո՞վքեր են հանդիսացել հին հերոսական ծննդավայրի անունը կրող այս գեղեցիկ ավանի հիմնադիրները։

— Գլխավոր հիմնադիրը Փանոսն է,— ասում է Եղիա Ալաճաճյանը,— առանց նրա պողպատյա համառությանը, դժվա՛ր, որ գործը գլուխ գար։

— Ո՛չ, ինքը՝ Եղիա՛ն է,— հայտարարում է Նորաշխարհյան Փանոսը.— գործը գլուխ չէր գա, եթե չլիներ նրա շինարարի անսպառ եռանդը և խանդավառությունը։

— Չմոռանալ մեր Տյուվլատին՝ Կարանֆիլյանին,— հիշեցնում է Կարո Կիրակոսյանը...

— Իհա՛րկե,— ասում է Ստեփանը.— ճանաչում եք, չէ՞, հայտնի արվեստագետ, գորգագործ Տյուվլատ Կարանֆիլյանին. ձեր հարևանն է,— դիմում է ինձ.— նա հնուց այստեղ էր, քառորդ դարուց ի վեր։ Նա իր խորհուրդներով և ջանքերով մեծապես օգնել է նոր ավանի հիմնադրության գործին. նա վաղուց վիլլա ուներ Երևանում, ձեր թաղամասում, չէր կարող այստեղ նոր ի նորո բնակարան կառուցել, բայց սրտով այստեղ է միշտ և հաճախ այցելում է, ինչպես բժիշկ Ահարոնյանը։

Սրտառուչ է այս ամուր հոգով և ուժեղ կամքով մարդկանց ձգտումը հիմնադրության պատիվը միմյանց սեփականացնելու, նրանց անձնուրացությունը. հերոսական ժողովրդի իսկապես մեծահոգի զավակներ են նրանք։

Անձնուրացության գեղեցիկ մրցանքին վերջ է տալիս բժիշկը, հայտարարելով.

— Հիմնադիրներն են հանդիսացել հեռակայ հինգ անձնավորությունները՝ Փանոս Նորաշխարհյանը, Եղիա Ալաճաճյանը, Կարո Կիրակոսյանը, որ այստեղ ներկա են, և Տյուվլատ Կարանֆիլյանն ու Սահակ Բոյամյանը, որոնք բացակա են այս պահին։

— Փոքր ինչ պատմեցեք, գործն ի՞նչպես կատարվեց,— դիմում եմ ես ներկա հիմնադիրներին։

— Դեռ Հալեպումն էինք, երբ զեյթունցիների հայրենակցական միությունների կենտրոնական վարչությունը որոշում կայացրեց, որ ներգաղթող զեյթունցիներն իրենց հին ծննդավայրի անունով մի նոր ավան կառուցեն,— ասում է Նորաշխարհյանը։— Այնտեղ, Հալեպում, այդ նպատակով բանակցություններ մեջ մտանք ներգաղթի լիազորների հետ. նրանք պատասխանեցին, թե ավելի լավ է այդ հարցը կարգադրել տեղում, Հայաստանում, պետական օրգանների հետ, այդ նպատակով ընտրված հանձնախմբի կողմից։ Հենց որ զեյթունցիների առաջին խմբերս հասանք Հայրենիք, սկսեցինք մեր դիմումներին և բանակցություններին ներգաղթի կոմիտեի նախագահության և Մինիստրների Սովետի հետ։ Նրանք սկզբունքով հավանություն տվեցին, և սկսեցինք մանգալ՝ բարեհարմար տեղ որոշելու համար։ Մեզ առաջարկվեց Հաղթանակի կամրջից այն կողմ, Երևան—Էջմիածին խճուղու աջակողմը գտնվող հողամասը, այն վայրը, ուր հետագային կառուցվեց Նոր-Կիլիկիա ավանը։ Տեղը շատ նպատակահարմար էր մի նոր ավանի կառուցման համար, հողը շատ բերրի էր, արդեն մշակված, և մայրաքաղաքին շատ մոտիկ, բայց ուներ մեզ համար մի կարևոր թերություն—լեռնային չէր. իսկ Նոր-Զեյթունը, ինչպես հինը, հարկ էր որ լիներ լեռնային, իր տեղադրությամբ՝ նման հնին։ Ի վերջո նպատակահարմար համարեցինք այստեղը, և Նոր-Զեյթունի հիմնարկեքը կատարեցինք 1947 թվի գարնանը։

Ներկաները պատմում են, թե հենց որ նոր ավանի տեղն որոշվել է՝ Փանոսն այնտեղ վրան է խփել և ապրել այնտեղ, ամեն էլ վրանի տակ մնալու հաստատ որոշումով, մինչև իր բնակարանի և ավանի առաջին շենքերի կառուցումն ավարտվի, և որոշումը գործադրել է զեյթունցու հատուկ անխորտակ համառությամբ։

Փանոսը՝ ամբողջ մի դար Զեյթունի չորս թաղամասերից մեկը ղեկավարած քաջարի Նորաշխարհյանների արժանավոր ժառանգն է։ Նրա կյանքից իր հայրենակիցները պատմում են մի դրվագ, որ պարզ է և շքեղ, ինչպես դյուցազներգությունների հերոսների կյանքի դրվագները, ու «արժանի գրոց յիշատակի», ինչպես կասեր մեծ Խորենացին։

Հայրենադարձության մեծ շարժումն սկսվում է։ Ներգաղթի լիազորները հասնում են Հալեպ՝ հայրենադարձների առաջին քարա-

վանները նախապատրաստելու։ Փանոսն այն հայրենասեր մարդկանցից է, որոնք խմբվել են լիազորների շուրջը, օժանդակում են նրանց գործին։ Նա ցանկություն է հայտնում առաջին իսկ քարավաններով ուղևորվելու։ Լիազորները չեն ընդառաջում. նախ որ, հայտնի է եղել իրենց, թե Փանոսն ունևոր մարդ է, ունի երկհարկանի սեփական բնակարան, այնինչ՝ կան բազմահազար չքավորներ, գործազուրկներ, որոնց հարկ է ուղարկել առաջին հերթին. երկրորդ՝ Փանոսը կարող է տեղում օգտակար լինել քարավանների նախապատրաստման և ճանապարհ հանելու գործին։ Տխուր է Փանոսը, որ իր ցանկությունը չեն կատարում։ Մի երեկո, ուրիշ գործակիցների հետ այցելում է լիազորներին։ Մեկ անգամ էլ դիմում է նրանց, որ իրեն ուղարկեն Հայրենիք։

— Եթե իսկ ցանկանանք և որոշենք քեզ ուղարկել անմիջապես, դու ինքդ չես կարող մեկնել իսկույն, չէ՞ որ ունես գործ, սեփական տուն, ժամանակ է պետք՝ դրանք հաշվեհարդարի ենթարկելու համար, չէ՞,— ասում է լիազորներից մեկը։

Փանոսը ծխելիս է եղել։ Թափ է տվել գլանակի մոխիրը մոխրամանի մեջ և ասել, շատ լուրջ և հաստատակամ.

— Իմ տունը, այս մոխիրը, մե՛կ են ինձ համար։ Ուզում եմ գնալ...։

Լիազորները մի հայացք են փոխանակում։

— Այդ դեպքում՝ պատրաստվի՛ր, քսանչորս ժամից մեկնում եք Հալեպից Բեյրութ, ուր շոգենավը հասնում է երկու-երեք օրից։

— Լա՛վ, շնորհակալություն,— ասում է Փանոսը երեխայի պես ուրախացած, և շտապում է տուն, պատրաստվելու մեծ ճանապարհորդության։ Երկհարկանի ընդարձակ տունը թողնում է ինչպես որ կա, լուսամուտները բաց քամիների առջև, էլեկտրական լույսը վառ։ Քսանչորս ժամ հետո, Փանոսը Հայրենիքի ճանապարհի վրա է, իր ընտանիքի հետ։

Այս պատմությունը, պատմված Եղիայի ժողովրդական պարզ և անպաճույճ լեզվով, հիացումի և հուզումի արցունք է բերում իմ աչքերին։

— Շա՛տ լավ արեցի,— խոսում է Փանոսը իր արարքներից գոհ մարդու ուրախ ժպտով,— օտար ափերի վրա անկայուն այդ բնակարանի տեղ՝ տեսե՛ք...։

Նա ձեռքը պարզում է դեպի լուսամուտը, որտեղից երևում է նրա երկհարկանի սիրուն բնակարանը, որը համատեղ կառուցել են ինքն և քեռայրը՝ Կարո Կիրակոսյանը, ներգաղթած Իրանից։

Փանոսն ունի մոտ 1.000 քառակուսի մետր հողամաս, որ Եղիայի նույնչափ հողամասի հետ կազմում է մի ամբողջություն՝ շրջապատված պարիսպով։ Երկու հարևան տնամերձների միջև, նրանց սահմանը զատող ո՛չ պատ կա, ո՛չ էլ ցանկապատ, ի նշան նրանց միջև տիրող հայրենակցական-բարեկամական ամուր և սերտ կապի։ Նրանք տնկել են մրգածառեր, ծաղկանոց, բանջարանոց։ Լավ, ունևոր և ուրախ տնտեսություններ են երկուսն էլ։

Փանոսն ատաքանովական է Կոշիկի առաջին գործարանում. նա ցեխի վարպետ է, արժանացել է պատիվների. թերթում նշվել է իր աշխատանքային սխրագործությունների մասին։ Նրա հինգ զավակներից երեքը գնում են դպրոց, մյուս երկուսը մանկահասակ են դեռ։

Փանոսին, այս միջահասակ, լիքը և ամրակուռ մարմնով, համակրելի դիմագծերով, հայրենասիրական ջերմ հոգով, ուժեղ կամքով մարդուն չես մոռանա, երբ մի անգամ ծանոթացել ես նրա հետ։

Եղիա Ալաճաճյանը՝ բարձր և բարեկազմ, ամրապինդ մարմնով, կարմրադեմ, ուրախ մի մարդ է, զբաղվում է շինարարությամբ։ Իր շինարարական ճարտարությունն ու համարձակությունը տեսանելի են հենց այս շքեղ և հաստատուն շենքի վրա, որը կառուցել է իր կրտսեր եղբոր հետ միասին։ Երկու եղբայրներ իրենց յոթ զավակներով ապրում են սիրով և համերաշխ, ութ ընդարձակ սենյակներով այս բնակարանում։

Եղիայի տղաներից երկուսը՝ Հակոբը և Հովհաննեսը աշխատում են Ավտոդեպոյ գործարանում, լավ աշխատողներ են. Հակոբն արժանացել է պատվոգրի։ Մյուս տղան՝ Ստեփանը, ինչպես ասացինք, ավարտել է Պետական համալսարանը և զբաղվում է գեղարվեստական գրականությամբ, խոստանալով փայլուն ապագա։ Եղիայի մեծ աղջիկը՝ Էլիզը ավարտել է Օտար լեզուների ինստիտուտը և ուսուցչուհի է Նոր-Զեյթունի դպրոցներից մեկում։ Կրտսեր աղջիկը գնում է տասնամյա դպրոց։

— Եթե իմանայի, որ զեյթունցիների, այն էլ հիմնադիրների օջախն եմ ընկնելու, հետս կբերեի լուսանկարիչ և լուսանկարել կտայի ձեզ,— ասում եմ ես։

— Այդ հեշտ է, —ասում է Եղիան,— Կարոն այստեղ է իր ավտոյով։ Ճանաչո՞ւմ եք Շահրիկյան Կարոյին. Ամերիկայում հայտնի լուսանկարիչ է եղել, արվեստագե՛տ-լուսանկարիչ։ Նա մեր բժիշկ Ահարոնյանի անեղբորդին է. միասին բնակարան են կառուցել Այգեստանում։ Նա ոչ միայն առաջնակարգ արվեստագետ-լուսանկարիչ է, այլև առաջնակարգ սպորտսմեն, լա՛վ նշանառու. Հայաստանի ռեսպուբլիկական նշանաձգության մրցանքներին շահել է առաջին տեղերից

մեկը։ Բնիկ Շաբին-Կարահիսարցի է, բայց մենք նրան «մկրտել» ենք զեյթունցի։ Եթե այսօր հնարավոր չեղավ, գալիք կիրակիի համար կկարգադրենք, որ լուսանկարի մեզ։

— Զեյթունցիներին վայել չէ գործերը ձգձգել,— միջամտում է բժիշկ Ահարոնյանը, — ինչո՞ւ ոչ հենց այսօր։ Կարո՛ ջան, Կարո՛, մի բոպե այստեղ շնորհ բե՛ր,— բարձրացնում է ձայնը։

Դրսի սենյակի զեյթունցիների խմբից անջատվելով, հյուրասենյակ է մտնում մոտ հիսուն տարեկան, բայց երիտասարդական արտաքինով, բարձրահասակ, նուրբ և պինդ մարմնով, մարզիկի առույգ շարժումներով մի մարդ. ինքը՝ նշանավոր Կարոն է։

«Նշանավոր Կարո»,— դա Եղիայի որակումն է։

— Գիտե՞ք ինչու «նշանավոր»,— բացատրում է մեզ Եղիան։— Ո՛չ նրա համար՝ որ չեմպիոնական կոչում ունեցող նշանառու է, ո՛չ էլ նրա համար, որ վարպետ արվեստագետ-լուսանկարիչ է, այլ ուրիշ պատճառով։ Սա մեր Փանոսին էլ գերազանցում է իր հայրենասիրությամբ. եթե Փանոսը լքել եկել է տունը հանուն Հայրենիքի, մեր Կարոն, հանուն Հայրենիքի, լքել է իր կնոջն ու զավակներին։ Կինը և զավակները չեն ուզել Հայրենիք գալ։ Կարոն, երկար ժամանակ նրանց համոզել փորձելուց հետո, եկել է մենակ...։

Այսօր բախտավոր օր է. ուժեղ բնավորություններով մարդկանց ենք հանդիպում, հիանալի մարդկային տիպերի։

— Ավտոդ դռան առաջ սպասում է, իսկ դու լավ և եռանդալից մարդ ես, չէ՞,— դիմում է բժիշկը իր աներորդուն, ժպիտը դեմքին։— Ուրեմն, նեղություն կքաշես, կգնաս Այգեստան, կբերես լուսանկարչական գործիքներդ, կլուսանկարես զեյթունցիների մի խմբի։

— Զեյթունցիներին ի՞նչպես կարելի է մերժել,— պատասխանում է Կարոն ծիծաղելով։— Ահա՛ գնացի։

Վերադառնում է կես ժամ չանցած, ու առնում ցանկացված լուսանկարները։

Արդեն երեկոն իջել է անզգալաբար՝ այնինչ մենք շարունակում ենք խոսակցությունը հին ու նոր զեյթունցիներից։ Ոտի եմ բարձրանում հրաժեշտ տալու։

Ո՛չ և ոչ։

— Կմնաք մեզ հետ ճաշելու. կլինի զեյթունցիական ճաշասեղան, կխմենք հին Զեյթունի հիշատակին, Նոր-Զեյթունի կենացն ու արևին։ Ամոհասարակ ոչ ոքի չի թույլատրվում գնալ։ Թե չէ կարող ենք մտածել, որ չեք ախորժում զեյթունցիների շրջանը,— ասում է տան պետը՝ Եղիան։

— Հետո էլ կգնանք սուրճը մեզ մոտ խմելու,— ասում են Փանոսն ու Կիրակոսյան Կարոն։

Ինձ վերջնականապես համոզելու համար, Փանոսն ավելացնում է.

— Ես ձեզ ցույց կտամ հին Զեյթունի հին զենքերից, որ զեյթունցիներն իրենք իսկ կերտել են իրենց սեփական ձեռքերով, հենց Զեյթունի սարերում գտնվող երկաթե հանքերից, և որոնցով կռվել են իրենց գոյության և անկախության սպառնացող թշնամական տարրերի դեմ։

Եղիան, եղբայրը, տղաները, բժիշկ Ահարոնյանը, երկու Կարոները, ես և մի քանի ուրիշները բոլորվում ենք ընդարձակ ճաշասեղանի շուրջը, պես-պես ուտելիքներով և խմիչքներով լիքը։ Խոսվում են բաժակաճառեր, երգվում են հին Զեյթունին նվիրված երգեր, հայ ժողովրդական երգեր, սովետահայ կոմպոզիտորների ստեղծագործություններ։ Գինու բաժակները դատարկվում են զանազան կենացներով։

Երկու ժամից ավելի է տևում զեյթունցիական այս խնջույքը, որից հետո բոլորս միասին անցնում ենք Նորաշխարհյանի և իր քեռայր Կարո Կիրակոսյանի բնակարանի ընդունարանը, ակնահաճո, ճաշակավոր կահավորումով, արևելյան դունավառ գորգերով զարդարուն։ Փանոսը բարձրանում է վերևի հարկը և բերում հին զեյթունցիների հինավուրց ինքնապաշտպանության և պայքարի զենքերը՝ «Զախմախլը» երկարաձիգ հրացանը, խոշոր «տաբանջա»ն — այն զենքերի նմանները, որոնցով հին զեյթունցիները քաջության հրաշքներ են գործել, դարերով պաշտպանել իրենց ազատությունը, կյանքը, պատիվը։

Հյուրասիրվում ենք սրճով և քաղցրավենիներով — ի միջի այլոց, նաև զեյթունցիների ավանդական «ընկուզի անուշ»ով։

Ուշ գիշերին, Կարոն իր ավտոյով բերում է մեզ քաղաք, մեր տները։

***

Հերոսական հին Զեյթունը ապրում է նորի մեջ, ապրում է անվտանգ, խաղաղ, ապրում է արևոտ, երջանիկ կյանքով, և է՛լ ավելի լուսապայծառ, է՛լ ավելի երջանիկ հեռանկարներով, Հաղթանակի մոնումենտի և դուրդ Մասիսների հայացքի ներքո։